ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ
15.05.2025Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքների ներկա են ավագանու 23 անդամները, բացակայում են Նարեկ Բաբայանը, Գարիկ Պալյանը, Նորիկ Մալխասյանը և Զարուհի Կարապետյանը:
Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում են՝

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ս.Վարդանյանը, համայնքի ղեկավարի գլխ.խորհրդական Վ.Չիլինգարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Ա.Խլղաթյանը, համայնքի ղեկավարի օգնականներ Ա.Գասպարյանը աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժինների պետերը և համայնքի վարչական ղեկավարները:

Նիստը վարում է Չարենցավան համայնքի ղեկավար Հ. Շահգալդյանը:

Լսեցին.

Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան

Ձեզ եմ ներկայացնում Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի օրակարգը:

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 5 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 62-րդ հոդվածների դրույթներով. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 5 նիստի օրակարգը՝

1) Չարենցավան համայնքի 2026 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները հաստատելու մասին :
2) Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 111-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
3) Սեփականության իրավունքով քաղաքացիներին պատկանող հողատարածքների նպատակային և գործառնական նշանակության փոփոխության թույլտվություն տալու մասին:
4) Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի գյուղ Բջնի 1-ին փողոց թիվ 102/1 սեփականություն հանդիսացող շինությունը և հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին:
5) «Հատիկ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գյումուշի լիթոիդային պեմզաների հանքավայրի տարածքում շահագործման թույլտվության ժամկետը երկարաձգելու համաձայնություն տալու մասին:
6) Համայնքային շահերի պաշտպանության նպատակով իրավասու դատարան հայց հարուցելու մասին:
7) Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստի գումարման օրը սահմանելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը՝ օրակարգային հարցերի վերաբերյալ:

Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

1. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ :

/Զեկ. Վ.Չիլինգարյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հաշվի առնելով, որ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ Չարենցավան համայնքի կողմից ներկայացված «Չարենցավան համայնքի 2026 թվականի բնապահպանական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման առաջնայնությունները և դրանց ֆինանսավորման համամասնությունները» ծրագիրը հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության կողմից, ղեկավարվելով «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածների դրույթներով՝ Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Չարենցավան համայնքի կողմից 2026 թվականին իրականացվելիք բնապահպանական ծրագրին՝ համաձայն հավելված (NN 1.2):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Համայնքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արթուր Գալստյանը բնապահպանական ծրագրի հետ կապված տարբեր հարցեր տվեց, որին զեկուցողը տվեց պարզաբանումներ:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ-0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

2 ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 111-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. Գ.Աֆյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածներով, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի «Չարենցավան համայնքի 2025 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 111-Ն որոշման հավելվածի N 1-6 հատվածներում կատարել փոփոխություններ՝

Տողի N	Եկամտատեսակները	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
				Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
1	2	3	4	5	6	7
1.	Հողի օտարումից մուտքեր		263754.737	0	169392,6	433147,337

/հազ. դրամ/

Բաժին	Ոլորտ	Դաս	Ծրագրի անվանումը	Հոդվածի NN	Ընդամենը	Բյուջեի ավելացում		Ընդամենը
						Վարչ. մաս	Ֆոնդ. մաս	
01	6	1	Ընդհանուր բնույթ հանրային ծառայություններ /այլ դասերին չպատկանող	5113	4961,04	0	13661,0	18622,04
				5122	600,0	0	1000,0	1600,0
04	5	1	Ճանապարհային տրանսպորտ	5113	209558,16	0	154731,6	364289,76

2. Թույլատրել գնումները կատարել Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքի համաձայն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Ավագանու անդամները քննարկումներ ծավալեցին նաև համայնքում փոսային, համատարած ասֆալտապատման, խաղադաշտերի վերանորոգման և նոր խաղադաշտերի կառուցման շուրջ, որոնց համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ Ս.Վարդանյանը տվեց մանրամասն պատասխաններ:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ - 23 դեմ-0 ձեռնպահ- 0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

3. ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով քաղաքացիների ներկայացրած ճարտարապետահատակագծային առաջադրանքի հայտերը. Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սեփականության իրավունքով Գեղամ Խանդանյանին պատկանող 07-008-0213-0025 ծածկագրով 4.39957 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողից 0.135 հա մակերեսով հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել որպես արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողատեսքի, իսկ 0.08 հա մակերեսով հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել, որպես ջրային նշանակության ջրային հողատեսքի:
2. Սեփականության իրավունքով Անդրանիկ Քոչարյանին պատկանող 07-019-0413-0110 ծածկագրով 0.33258հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության վարելահողի և այլ հողատեսքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել 0.19258 հա մակերեսով հողատեսքը որպես արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական գործառնական նշանակության հողատեսքի, իսկ 0.14 հա մակերեսով հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել, որպես ջրային նշանակության ջրային հողատեսքի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան՝</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԲՋՆԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 102/1 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ և ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ.Բ.Բալբաբյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հաշվի առնելով Չարենցավան համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի գյուղ Բջնի 1-ին փողոց թիվ 102/1 սեփականություն հանդիսացող 195,81 քմ մակերեսով ամբուլատորիայի շինությունը և նրանող զբաղեցրած 0.15 հա մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում ձեռնարկել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 23 դեմ- 0 ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

5. «ՀԱՏԻԿ» ՍՊԸ-Ի ԿՈՂՄԻՑ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԵՆԻՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՄՈՒՇԻ ԼԻԹՈՒԴԱՅԻՆ ՊԵՄՔԱՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ.Ս.Բալաբեկյան/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման 28-րդ կետի, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ նախնական համաձայնություն «Հատիկ» ՍՊԸ-ի կողմից նախաձեռնվող ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Կարենիս բնակավայրի վարչական տարածքում գտնվող Գյումուշի լիթոիդային պեմզաների հանքավայրի շահագործման թույլտվության ժամկետը երկարաձգելու և աշխատանքներն ընդլայնելու գործընթացին:
2. Սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունն ու տեսագրությունը օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

«Միասնական համայնք դաշինք» խմբակցության անդամ Վ.Մակինյանը առաջարկեց, «Հատիկ» ՍՊԸ-ին նախապես ներկայացնել, որ ապագայում կնքվող պայմանագրում փոխել հատկացվող հողատարածքների վարձավճարները, քանի որ նախկին թույլտվությունը 20 տարի առաջ է եղել, և հիմա շուկայական գները փոխվել են:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 19 դեմ- 0 ձեռնպահ-4

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

6. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱՎԱՍՈՒ ԴԱՏԱՐԱՆ ՀԱՅՑ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ.՝ Վ.Մուսայելյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության դատախազներ Դ. Գրիգորյանի, Ա. Մաթևոսյանի, Ն. Նազարյանի «Առաջարկություն՝ հայց ներկայացնելու վերաբերյալ» գրությունները, Չարենցավան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Համայնքային շահերի պաշտպանության նպատակով հայց հարուցել իրավասու դատարան.

1) Անվավեր ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 2020 թվականի հունիսի 30-ի թիվ 474 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել՝ Բագրատ Աշոտի Մուրադյանի անվամբ 2020 թվականի հուլիսի 7-ին կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն:
2) Անվավեր ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 2020 թվականի հունիսի 30-ի թիվ 472 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել Հարություն Ղարիբյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն:
3) Անվավեր ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 2021 թվականի հուլիսի 19-ի թիվ 803 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել Տիգրան Գագիկի Նավասարդյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն:
4) Անվավեր ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 2013 թվականի օգոստոսի 21-ի թիվ 419 որոշումը և որպես հետևանք անվավեր ճանաչել Գառնիկ Փանոսյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն:
5) Անվավեր ճանաչել Չարենցավան համայնքի ղեկավարի 2021 թվականի սեպտեմբերի 3-ի թիվ 945 որոշումը և որպես հետևանք՝ անվավեր ճանաչել Սամվել Գևորգյանի անվամբ կատարված սեփականության իրավունքի պետական գրանցումը և սեղանամատյանի գրառումն:

2. Լիազորել Չարենցավան համայնքի ղեկավարի առաջին տեղակալին Չարենցավան համայնքի ավագանու անունից կնքելու պայմանագիր փաստաբանական ծառայությունների մատուցման համար:

3. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով սահմանված լիազորություններով, բացառությամբ հաշտության համաձայնություն կնքելու լիազորության, փաստաբանին տալ լիազորագիր:

4. Չարենցավան համայնքի բյուջեից գումար հատկացնել փաստաբանական ծառայությունների մատուցման և դատական ծախսերի համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու իրավա-հասարակական մշտական հանձնաժողովը տվել է բացասական եզրակացություն:

<u>Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան</u>՝

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 0 դեմ- 22 ձեռնպահ- 1

Որոշումն չընդունվեց:

Լսեցին.

9..ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԹԻՎ 6 ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ Ս.Մուրադյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով Չարենցավան համայնքի ավագանին՝***որոշում է***.

1. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական թիվ 6 նիստի օր և ժամը սահմանել 2025 թվականի հունիսի 13-ը, ժամը 12:00:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը հայտարարեց, որ նախապես առաջարկված հաջորդ նիստի օրը՝ հունիս 13-ը , անհրաժեշտություն է առաջացել փոխելու հունիսի 16-ին:

Առաջարկը անցավ միաձայն:

Համայնքի ղեկավարՀ. Շահգալդյան՝

Քվեարկության եմ դնում փոփոխված որոշումը:

Կողմ- 23 **դեմ-0** **ձեռնպահ-0**

Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:

Չարենցավան համայնքի ավագանու անդամներ՝

Առաքելյան Նորայր
Բաբայան Արայիկ
Բաղդասարյան Սահակ
Գալստյան Արթուր
Գևորգյան Գևորգ
Դավթյան Կարեն
Եփրեմյան Բաբկեն

Եփրեմյան Տարոն

Թադևոսյան Նունե

Խաչատրյան Արշակ

Հարոյան Լիլիթ

Ղամբարյան Գարիկ

Մակինյան Վարդան

Մուքայելյան Վալերի

Շահգալդյան Հակոբ

Պապոյան Դավիթ

Պետրոսյան Ավետիք

Պողոսյան Մնացական

Սահակյան Գառնիկ

Վարդանյան Նորայր

Վարդանյան Նորիկ

Վարդանյան Սարգիս

Վարդանյան Սևակ

Նիստն արձանագրեց Ս.Մուրադյան----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ